Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԱՐՏԻԿԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

...ГОСБИБЛИОТЕКА Т.С.С.Р.
2641.

ՀՐԵՏԱՁՈՐԻ ՄԱՍԻՆ

1 9 3 1

ՅԵՐԵՎԱՆ

358
Ч-32
1 MAR 2010

358.(47С)

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

ՀՐԵՏԱՋՈՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՐՎԱԾ ՀՐԵՏԱՋՈՐԻ
ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հ. Հ. ԴԻՎ. ՔԱՂՐԱՔԻՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 19[illegible]

42.492

20 MAY 2013

Памятка красноармейцу

Об артиллерии

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ ... ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

43535-13

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Գրագոդ. 6108(բ). Պատվեր 158 Տիրաժ 65 00

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ

Զորքի ամեն մի տեսակի կարմիր բանակայինը պետք է իմանա՝ ինչի համար է հարկավոր հրետագոըը, ինչպես է նա կառուցված (կազմակերպված) ու ինչով է զինված, ինչպես է նա հրաձգում, ինչպես է կրակ վարում հետևակի և զորքի մյուս տեսակների հետ: Կարմիր բանակայինը պետք է հասկանա թե ինչով է արտահայտվում հրետանու օգնությունը մյուս զորքերին մարտում:

Կարմիր բանակայինը պարտավոր է օգնել հրետանուն ինչպես իր աշխատանքով, այնպես էլ՝ հակառակորդի, տեղանքի և իր զորքերի մասին ձեռք բերած տեղեկություններով:

Կարմիր բանակայինը պետք է իմանա, թե ինչպես կարելի յե իմաց տալ իր հրատանուն կրակ բանալու, ում պետք է դիմել հրատանուց արագ և գործոն կրակային օգնություն ստա.

նալու համար։ Նա պետք է կարողանա հակառակորդից խլած հրանոթը թշնամու դեմ ոգտագործել։

Մարտիկի համար ոգտակար է իմանալ, թե ինչպես արագորեն կարելի է հրանոթները անպետք դարձնել, վոր խլվում են հակառակորդից, և այն դեպքերում, յերբ հարկավոր է լինում թողնել նրանց և հեռանալ։

ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ՀՐԵՏԱՆԻՆ

Իրեն կրակի ուժով հրետանին ամենից հզոր և ամենից ահավորն է զորքերի տեսակների մեջ։ Հրետանին իր կրակով քարուքանդ է անում և վոչնչացնում է բոլոր այն նշանները, վորոնց չի կարելի քարուքանդ անել և վոչնչացնել զնդացրերով և մյուս կրակային միջոցներով։

Հրետանու կրակը հարվածում է՝ ինչպես բաց տեղավորված (դասավորված) զորքերին, այնպես էլ թաքստոցներում ծածկված զորքերին (խրամատներում, բլինդաժներում, ապաստարաններում և այլն)։

Հրետանին քարուքանդ է անում արհեստական արգելքները (լարափակոցներ, արգելանոտառները (գասեկա) և այլն), վորոնք դրվում են հակառակորդի կողմից մեր զորքերի հարձակման ճանապարհի վրա։ Հրետանին վոչնչացնում է կամ ժամանակավոր լռեցնում է (չեզոքացնում է) հակառակորդի հրետանուն և նրա մյուս կրակային միջոցներին. ինչպես որինակ՝ զնդացրերին, ռմբանետներին, հետևակային հրանոթներին և այլն։ Հրետանին հակառակորդի տանկերի ու զրահամեքենաների գլխավոր թշնամին է։

Վերջապես հրետանին կարող է հաջողությամբ կռվել հակառակորդի ինքնաթիռների դեմ։

Հրետանին ընդունակ է հակառակորդին հարվածներ հասցնել հանկարծակի, նրա վրա թափելով միաժամանակ իր բազմաթիվ հրանոթների կը-

քակը։ Հրետանու կրակը գործոն է (գործում է) բոլոր հեռակայությունների վրա՝ ամենափոքր հեռակայությունից մինչև ամենամեծը։ Հրետանին կարող է արագ կերպով իր կրակը մարտադաշտի մի տեղամասից տեղափոխել մյուս տեղամասի վրա առանց իր հրանոթների տեղը փոխելու։

Ոժտված լիներով մեծ շարժունությամբ, հրետանին ընդունակ է արագ շարժումներ կատարել մարտադաշտում. նրան կարելի է հեշտությամբ տեղափոխել ճակատի մի տեղամասից մյուսը. նա կարող է ուղեկցել հետևակի շարժմանը՝ պաշտպանել նրան մարտից դուրս գալու, հետապնդել նահանջող հակառակորդին։

Առանց հրետանու չի կարելի մարտ մղել. հրետանու կրակը ճանապարհ է բաց անում հետևակի համար և նրա համար հզոր հենարան է պաշտպանության ժամանակ։

ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀՐԱՆՈԹՆԵՐ ՅԵՎ ԱՐԿԵՐ

Հրետանու զենքը հրանոթն է։ Ծանր հրանոթները մեծ հզորություն ունեն, հրաձգում են մեծ հեռավորության վրա՝ խոշոր ավերող ուժի արկերով. թեթև հրանոթները հրաձգում են փոքրը հեռակայությունների վրա, քիչ ավերող ուժի հրանոթներով։

Թնդանոթները— յերկար հրանոթները, հոբիցները—կարճ են։ Թնդանոթները հրաձգում են գետնամերձ և ունեն գետնամերձային հետագծեր. հոբիցներն ուղղաձիգ կրակ են տալիս և ունեն դիք (ուղղորդ) հետագծեր։ Թնդանոթների արկերն ավելի արագ են թռչում, քան թե հոբիցների արկերը։

Թնդանոթները բաց և ուղղահայաց նշաններ վոչնչացնելու և քանդելու համար են. որինակ՝ զնդացրեր, զբաղամեքենաներ, կենդանի ուժ. հոբիցները հարվածում են այնպիսի նը-

չանների, վորոնք ծածկարանների և թաղստոցների յետևում են գտնվում. որինակ՝ խրամատների, չերտափակերի (բլինդաժների), ապաստարանների յետևում։

Դաշտային հրետանու հրանոթները հրաձգում են՝ 76 միլիմետրանոց դընդային թնդանոթը 5 և մի քիչ ավելի կիլոմետրի վրա և 122 միլիմետրանոց թեթև հոբիցը՝ 8 կիլոմետրի վրա. 107 միլիմետրանոց ծանր թնդանոթը մինչև 12 կիլոմետրի վրա, 152 միլիմետրանոց ծանր հոբիցը՝ 9 կիլոմետրի վրա։

Թեթև հրանոթները տեղափոխում են ձիաքարշով, ծանրները— ձիաքարշով կամ մեքենաքարշով (տրակտորով)։

Հրետանական արկերը, նայած նրանք ինչի համար են նշանակված, զանազան տեսակ են լինում. որինակ՝ շրապել, նռնակ, քիմիական, ծխային, հրձիգ, լուսատու, զրահահար և այլն։

ՇՐԱՊՆԵԼԻ ՅԵՎ ՆՌՆԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Շրապնելը նշանակվում է բաց կենդանի նշաններ վոչնչացնելու համար, նա պայթում է ոդի մեջ, նշանին հարվածում է գնդակներով. շրապնելը պայթելու ժամանակ ծխի մի սպիտակ ամպ է ստացվում։ Շրապնելը լավագույն կերպով գործում է գորքերի վրա հրաձգության ժամանակ, վորոնք բաց, վոչ խորտուբորդ տեղանքում են գտնվում. հոբիցի շրապնելը կարող է հարվածել այն նշանները, վորոնք գտնվում են ձորակներում և բարձրությունների հակառակ լանջերի վրա։

Հաջող պայթած շրապնելը կարող է շարքից դուրս բերել 20 մետր ճակատով և մինչև 400 մետր խորությամբ տեղամասի վրա յեղած մարդկանց. հրաձգության հեռակայությունը (դիստանցիա) մեծացնելով փոքրանում է առանձին շրապնելի հարվածելու խորությունը։

Եթե նշանից բարձր է պայթում շրապնելը և յեթե գետնի վրա յե պայթում (կլեվոկ—գետնաշուփ պայթյուն) համարյա չի հարվածում նշանին։ Շրապնելի լավագույն գործողությունն ստացվում է այն ժամանակ, յերբ նա պայթում է նշանի առջևում, մոտավորապես 50 մետրի վրա և 10-ից մինչև 60 մետր բարձրության վրա (նայած հեռակայությանը)։

Նռնակը ավերում է նշանները իր պայթուցիչ լիցքի դագերով և հարվածում է բեկորներով (կտորներով)։ Նռնակը պայթում է գետնի վրա, պայթելու ժամանակ ծխի սև ամպ է առաջացնում։ Նայած պայթեցուցչի կազմությանը, նռնակը կարող է պայթել անմիջապես արկի գետնին ընկնելուց հետո, կամ յերբ արկը մի քիչ թաղվում է արգելքի մեջ, կամ վոստոստյունից (ռիկոշետ) հետո։ Առաջին դեպքում արկի պայթյունի տեղում վոչ մեծ փոս է առաջանում (ձագար—վարոնկա), բազմաթիվ բեկոր-

ներ են ստացվում, և նրանք մեծ արագությամբ թռչում են զանազան կողմեր։ Յերկրորդ դեպքում՝ նռնակի պայթյունի տեղում խոշոր փոս է (ձագար) ստացվում՝ դագերից հողը ցրիվ է գալիս այս ու այն կողմը, բեկորները քիչ են և նրանց թռիչքը այնքան մեծ չէ։ Յերրորդ դեպքում— նռնակը պայթում է ոդում վոստոստյունից (ռիկոշետից) հետո։

Նռնակի բեկորների մահաբեր գործողությունը պայթման կետից 15 մետրից հեռու չի տարածվում, թեև առանձին խոշոր կտորներ թռչում են ավելի հեռու (հոբիցային ռումբերինը՝ մինչև 400 մետր)։

Նռնակով մեծ հաջողությամբ կարելի յե հարվածել գնդացրերին, զրահամեքենաներին և տանկերին, քարուքանդ անել լարափակոցներ հողե և այլ ծածկարարներ, իսկ նռնակի բեկորներով— կենդանի ուժին (մարդկանց, ձիերին)։

ՔԻՄԻԱԿԱՆ ՅԵՎ ԾԽԱՅԻՆ ԱՐԿԵՐ

Քիմիական արկը պայթելու ժամանակ թունավոր հեղուկ և չաղ տալիս կամ ծխի թունավոր ամպ է կազմում. քիմիական հեղուկը թունավորում է ոդը, հողը, բուսականությունը և տեղական առարկաները. թունավոր գազը, խառնվելով ոդի հետ, թունավորում է ոդը: Հրետանին ընդունակ է արագորեն և հանկարծակի թունավոր ամպ ստեղծել և յերկար ժամանակ պահել այն. նա ընդունակ է վարակել տեղանքը, անհնար դարձնելով այդ տեղանքում մարդկանց ու կենդանիների մնալը: Քիմիական արկերը գործադրում են վոչնչացնելու կամ ժամանակավորապես ճնշելու (չեղոքացնելու)՝ ինչպես կենդանի ուժին, այնպես եվ կրակային միջոցները (որինակ հակառակորդի հրետանուն):

Ծխային արկերը նշանակվում են հակառակորդին կուրացնելու համար կամ ծածկելու հակառակորդի աչքից մեր

զորքերի շարժումներն ու գործողությունները: Հրձիգ արկերը գործադրում են կառուցվածքները հրդեհելու համար և այլն: Լուսատու արկերով հրաձգություն են կատարում գիշերը՝ հակառակորդին և տեղանքը լուսավորելու համար: Զրահահար արկերը ծակում փչացնում են տանկերի, զրահամեքենաների և ինքնաթիռների զրահները: Հրետանին իր արկերը կրում է քարշակներով (պերեզոկ), ոմքարկղներով և սայլերով:

ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀՐԵՏԱՆԻՆ

Հրետանին մարտում գործում է թե՛ առանձին հրանոթներով և թե՛ մարտկոցով: Մեր մարտկոցներն ունեն յերեքական հրանոթ և մեկական լրծված արկղ յուրաքանչյուր հրանոթին:

Մարտկոցը բաժանվում է յերկու դասակի, այն է՝ կառավարման (վարչական) դասակ և կրակային դասակ: Կառավարման դասակն ունի՝ մեկ

հետախուզության ջոկ և յերկու կապի ջոկ։ Կրակային դասակը կազմված է կրակային ջոկից և քարշի ջոկից։

Մարտկոցների հետախույզները հակառակորդի և տեղանքի հետախուզություն են կատարում, դիտում են մարտադաշտին և մարտկոցի հրաձգությանը, փնտռում են դիտողական կետեր և կրակային դիրքեր և դեպի նրանց տանող հարմար ու դաղտնի ճանապարհներ. հետևում են իր զորքերի դրությանն ու գործողություններին, դեռքերի և պահպանության ծառայություն են կատարում, նույնպես և հեծյալ կապի ծառայություն են տանում։ Կապավորները կապ են հաստատում և պահում մարտկոցի ու այն վաշտի հրամատարի միջև, վորին պաշտպանում է մարտկոցն իր կրակով, կապ են հաստատում ու պահում մարտկոցի հրամատարի դիտակետի և առաջավոր (կամ կողքի) դիտակետի միջև և կրակային դիրքի միջև։ Ձիավարներն ու մեքենավարները նշանակվում են ձիերին (մեքենաները) քաշելու համար մարտկոցի շարժման ժամանակ։ Մարտում նրանք տեղավորվում են ծածկարանների յետևում, կրակային դիրքին մոտիկ, լիակատար պատրաստականությամբ՝ իսկույն հրանոթը քարշակների վրա հագցնելու համար։ Հրանոթային համրանքը (կրակային ջոկը) գործում է հրանոթների վրա (լցնում է նրանց, նշան է դնում և ձիգ է արձակում)։

Հրանոթները կանգնեցնում են կրակային դիրքում, սովորաբար, ծածկարանի յետևում անտառի բոլորքում, բարձրության հակառակ լանջի վրա, ձորակում, շինությունների յետևում և այլն) այնպես, վոր հակառակորդը իր դիտակետից չկարողանա տեսնել։ Հրաձգող մարտկոցն իր ձիգերի փայլով, փոշի բարձրացնելով կամ իր ծուխով հայտարերելով իրեն կարող է կարճ ժամանակով վոչնչացվել հակառակորդի հրետանու կողմից։ Ողային հետախուզությունից հրանոթները պետք է քողարկել, հարմարեցնելով տեղանքին։ Գործադրվում է և՛ արտ-

հետաքաղ քողարկում (տեղի գույնին համեմատ ցանցեր հյուսելով և ծածկելով հրանոթները)։

Կարճ ժամանակով մարտկոցներն ու առանձին հրանոթները կարող են հրաձգության համար դուրս գալ և բաց դիրքեր։ իր հետեվակին նեղ տեղից ազատել, փախչող հակառակորդին վերջնականապես ջախջախել, հակառակորդի հրետանուն ճնշել—ահա այն դեպքերը, յերբ հրետանին պետք է և կարող է կանգնել բաց դիրքում, հաշվի չառնելով հնարավոր կորուստներ ունենալը։

Ամեն յերեքական մարտկոց (գնդային հրետանիում—2) միանում կազմում են մի բաժնյակ (դիվիզիոն)։

Բաժնյակը կարող է միաժամանակ վճռել մի քանի կրակային խնդիրներ, որինակ՝ մի մարտկոցով խփել մեր հարձակվող վաշտի առջեվում գտնվող հակառակորդին, մյուսով—մեր վաշտի թևին հրաձգող գնդացրին, յերրորդով—հակառակորդին, վորը ծածկված մատույցով գալիս մոտենում է ոգնելու համար մեր վաշտի կողմից գրոհի յենթակա տեղամասին։

Հրետանական գնդում, սովորաբար, լինում է 3 բաժնյակ։

Հրաձգային գունդն ունի գնդային հրետանու մեկ բաժնյակ։ Հրաձգային դիվիզիային, բացի գնդային հրետանուց, տրվում է և դիվիզիական հրետանական գունդ։ Հրաձգային կորպուսը, բացի դիվիզիաների մեջ մտնող հրետանուց, ունի կորպուսային հրետանու մի գունդ։

Մարտում հրաձգային գունդը պաշտպանվում է ամենաքիչը 2 հրետանու բաժնյակով, նույնպես և պաշտպանվում է դիվիզիական և կորպուսային հրետանիով, իսկ յերբեմն ել ուժեղացման հրետանիով, վորը տրվում է գլխավոր հրամատարության ոժանդակից։

Գլխավոր հարվածի ուղղության վրա, սովորաբար, կենտրոնացվում է շատ հրետանի, առաջին շարքի յուրաքանչյուր գրոհող գրոհաբանակ պաշտպանվում է ամենաքիչը 2 հրե-

ՀՍՍՌ-ԱՄՆ.ՍՍՌ Գոս. Գրադարան
Государственная Библиотека

տանու բաժնյակով, ուրեմն յուրաքանչյուր վաշտ—ամենաքիչը 2 մարտակոցով։

ԻՆՉՊԵՍ Ե ՀՐԱՁԳՈՒՄ ՀՐԵՏԱՆԻՆ

Հրանոթների կանգնած տեղից (կրբակային դիրք) հրանոթային համբանքը չի տեսնում նշանը, վորի վրա հրաձգում ե. այդ իսկի հարկավոր ել չե։ Կարեվորն այն ե, վոր նշանը տեսնի մարտկոցի հրամատարը, և հենց դրա համար ել նա դիտակետում ե դրա նվում, վորտեղից նա անհրաժեշտ հրամաններն ե տալիս մարտկոցին կրբակ վարելու համար։ Մի քանի դեպքերում, հրետանին կարող ե հարվածել նույնիսկ այն նշանները, վորոնք տեսանելի չեն և վոչ մի վերերկրյա դիտակետից։

Խոշոր ոգնություն են ցույց տալիս հրետանուն ինքնաթիռները (սավառնակները)։ Նրանք գտնում են նշանը, նրանց վրա յեն դարձնում մեր մարտկոցների կրակը և ուղղում են (ճշտում են) այդ կրակը՝ ձգտելով, վորքան

հնարավոր ե կրակն ուղղել ճիշտ նշանի վրա։ Ինքնաթիռը մարտկոցի հետ կապվում ե ռադիոյով։ Մարտկոցը ինքնաթիռին աղդանշաններ և տալիս հատուկ քաթանների և ռադիոյով։

Փակ դիրքում կանգնած մարտկոցը հրաձգում ե դիրքը ծածկող ծածկաբանի վրայով (որինակ՝ բարձրության կատարի վրայով), ձգել անցկացնելով այդ կատարի վրայով իր արկերը։ Հակառակորդի և ծածկաբանի միջև յեղած տարածության մի մասը չի կարելի մարտկոցով գնդակոծել։ Այդ տարածությունը կոչվում ե մեռյալ տարածություն։ Մեռյալ տարածությունը գնդակոծելու համար ողտվում են հարեվան մարտկոցների կրբակից կամ այդ գնդակոծման համար առաջ են տանում առանձին հրանոթներ կամ գնդացրեր։ Արկերը թռչելով դեպի նշանը, բարձրանում են գետնից վերև բավականին բարձր, այնքան բարձր, վորքան մեծ ե հրաձգության հեռակայությունը։ Հոթիցնե-

րի արկերինն ավելի բարձր քան թե թնդանոթներինը: Հրետանու հրաձգությունը մեր զորքերի գլխավերևով մեր զորքերի համար միանգամայն անվտանգ է: Համենայն դեպս, չը-պետք է հրաձգող մարտկոցի առջևում դասավորվել 400 մետրից մոտիկ, վորովհետև կարող է արկերի անժամանակ պայթյունների դեպքեր լինեն:

ՀՐԵՏԱՆԻՆ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏՈՒՄ

Մարտում զորքերի բոլոր տեսակների ջանքերը մի նպատակի յեն ուղղված—հաղթել թշնամուն:

Հրետանին խոշոր չափով հեշտացնում է այդ խնդրի կատարումը: Հարձակողական մարտում հրետանին վոչ միայն պետք է կոտրի թշնամու կենդանի ուժը, ճնշի նրա կրակային միջոցների կրակը և նրա հրետանուն, այլև նա պետք է քարուքանդ անի հակառակորդի կառուցած ծածկարանները ու անցքեր բանա արհեստական արգելքների մեջ:

Սակայն չպետք է մոռանալ, վոր վորքան էլ ուժեղ լինի հրետանին, նա չի կարող ամեն ինչ ավերել, ամեն ինչ վոչնչացնել: Դրա համար չեն բավականի վոչ հրանոթներ, վոչ արկեր և վոչ ժամանակ:

Բավական է հրետանական կրակով ավերել կարևորագույն կրակային կետերը, այնպես, վորպեսզի թշնամու զնդացրային պաշտպանության սիստեմի մեջ միջանցներ առաջանան, վոր թույլ և բոլորովին անընդունակ լինեն զնդակոծելու: Բավական է, յեթե հակառակորդի հրետանին այնքան ճնշված լինի, վոր մարտի կարևորագույն մոմենտներին (որինակ մեր գրոհի մոմենտին) նրա կրակը լինի թույլ և քայքայված: Վերջապես կարևոր է, վոր հրետանին անցքեր բանա արհեստական արգելքների մեջ և հետևակն անցնի նրանց միջով առանց վորևե խոչընդոտման:

Հրետանիով չվոչնչացրած հակառակորդի դեմ հետևակը պետք է կարողանա կռվել իր միջոցներով — գնդացրով, հրացանով, նռնակով և սվինով։ Այդ կռվում հետեվակին ոգնություն են հասնում նրան անհրաժեշտ հետևող դումարտակային և գնդային թնդանոթները։ Հետեվակի հետ միասին կռվում լինում են և առաջավոր հրետանական դիտողները, իսկ վաշտերի հրամատարներին կից գտնվում են այն հրետավորները, կապավորները, վորոնք հաղորդում են մարտկոցներին այն բոլորի մասին ինչ վոր խանգարում է հետեվակի առաջխաղացմանը։

ՀՐԵՏԱՆԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՍԱՐՏՈՒՄ

Պաշտպանողական մարտում հրետանի ունենալը շատ կարեվոր է։

Դեռևս մինչև հակառակորդի մեր պաշտպանության շերտի առջեվի յեզրին մոտենալը, հրետանին կարող է արդելք ստեղծել հակառակորդի հարձակման համար, գնդակոծելով դեպի պաշտպանության առջեվի յեզրը տանող բոլոր մատույցները։ Գրոհի մոտենալուն հրետանին հակառակորդին կարող է հանդիպել իր խափանիչ կրակով, իսկ պաշտպանության շերտի խորքը մտնելու դեպքում՝ իր կրակով շրջապատել հակառակորդի ներխուժած զորամասերին (կրակային մեշոք), արգելելով նրանց տարածվել դեպի կողմերն ու դեպի առաջ։

Հրետանին վոչնչացնելով պաշտպանության շերտը ներխուժած հակառակորդին, այդպիսով հեշտացնում է մեր հարվածող խմբակների հակագրոհները։ Ցանկերի գրոհին հրետանին կարող է հանդիպել բոլոր հրանոթների կրակով առջեվի յեզրից և վերջապես առանձին հրանոթների ու մարտկոցների կրակով, վորոնք դասավորվում են պաշտպանության շերտի ներսում։ Անհաջողության դեպքում հրետանին իր կրակով կծածկի հետեվակի մարտից դուրս գալը, թողնելով մարտկոցների մի մասը դիրքերում մինչև վեր-

ջեն վամվուշտը, նույնիսկ յերթե իր հրանոթներն ել կորցնելու լինի։

Պաշտպանության ժամանակ վճռական դերը պատկանում է զնդացրերին. հրետանին լրացնում է նրանց կրակը, իր վրա վերցնելով այն խնդիրները, որ չեն կարող կատարել զնդացրերը և հետեվակի մյուս կրակային միջոցները։

Վորովհետև պաշտպանության ժամանակ միշտ հրետանին փոքրաքանակ է լինում, դրա համար նա պարտավոր է վորքան հնարավոր է վարպետորեն ընտրել կրակային դիրքերը՝ լայն կիրառելով ամենից ավելի կործանիչ թեվային և չեղակի կրակը։ Հրետանին չպետք է ցրիվ տա իր կրակը, այլ նա պետք է խելացի կերպով համաձայնեցնի իր կրակը զնդացրերի ու հրաձիգների կրակի հետ։

Պաշտպանության հրետանին պետք է զգայուն և ուշադիր լինի դեպի մարտի ընթացքը, այնպես, որ անմիջապես կրակ տա այնտեղ, որտեղ տրվ-

յալ մոմենտին այդ ամենից շատ է անհրաժեշտ։

ԻՆՉՈՎ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՍ ՊԱՐՏԱՎՈՐ ՈԳՆԵԼՈՒ ՀՐԵՏԱՆՈՒՆ

Զորքերի բոլոր տեսակի մարտիկները պետք է ոգնեն հրետանուն, որպեսզի, վորքան հնարավոր է, նա արագորեն մարտ մտնի։

Այդ ոգնությունը բազմատեսակ կարող է լինել.— ճանապարհների ու կամուրջների վերանորոգումն ու ուղղումը, վորպեսզի հրետանին առանց արգելքի հանդիպելու առաջ շարժվի, հրետանական հետախուզության ցուցումները հարմար ու ծածկված ճանապարհների մասին հրանոթների շարժման համար, յերթի ժամանակ հանկարծակի գրոհներից մարտկոցների ապահովելը և ոգից ապահովելը, հակառակորդի մասին ունեցած տեղեկությունները հաղորդելը, հակառակորդի կրակային միջոցների, ծածկարանների, արգելքների, հրետանու մասին

տեղեկություններ հայտնելը և այլն:

Զորքերի բոլոր տեսակների մարտիկները պետք է պահպանեն հրետանական կապը, նրան վերաբերվելով այնպես, ինչպես իրենց զորամասի կապը, միշտ հիշելով, որ առանց կապի հրետանին հրաձգել չի կարող:

Հրետանին հարվածում է հակառակորդին իր արկերի գործողությամբ: Առանց մարտապաշարի հրետանին մեռած է. մարտիկները ամեն կերպ պետք է հեշտացնեն ռմբարկղների և արկերով լի սայլերի առաջխաղացումը:

Պետք է հիշել, որ հրետանական դիտակետերը հրետանու աչքերն են, որ հակառակորդը փնտրում է նրանց. Հայտաբերած դիտակետը իսկույն հրետանիով կվոչնչացնի, իսկ առանց դիտողության հրետանին մեծ մասամբ կրակ վարել չի կարող:

Չմոռանալով դիտակետի կարևոր նշանակությունը, մարտիկը պետք է մոտենա դեպի այդ դիտակետը գաղտագողի, ծածկված, թաքուն, ա-

ռանց հայտաբերելու այդ դիտակետերը հակառակորդին: Արգելվում է կուտակվել հրետանական դիտակետերում:

Չպետք է ապաքողարկել մարտկոցների կրակային դիրքերի դասավորումը: Դրա համար արգելվում է մարդկանց ամեն տեսակի կուտակում մարտկոցների կրակային դիրքերին մոտիկ, արգելվում է նրանց մոտ տեղավորել դումակ, խոհանոց և այլն:

Արագ հրաձգության դեպքում մարտկոցը կարող է իր արկերի պաշարը ծախսել մի քանի ժամվա ընթացքում: Այս միշտ հիշելով, չպետք է ստիպել մարտկոցին, որ նա աննպատակ կրակ վարի:

Հրետանու հակառակորդի վրա հրաձգության յուրաքանչյուր ուժեղացումը, այն հակառակորդի վրա, որը տեղավորված է մեր հետևակ զորամասի առջևում, պետք է ազդանշան լինի հետևակի համար վճռականապես առաջ անցնելու, այլ կերպ հրետանին անտեղի արձակած կլինի իր

արկերը և վճռական մոմենտին նա կարող է բոլորովին առանց արկերի մնալ։

Հակառակորդի հրանոթները դրավելով, մարտիկները խիզախ պետք է հայտնեն մոտակա հրետավորներին—առաջավոր դիտողներին, հետախույզներին, կապավորներին, հրամատարներին—այդ ժամանակ հրետավորները դրված թնդանոթները գործադրում են թշնամու դեմ։

Յուրաքանչյուր մարտիկ պետք է կարողանա թնդանոթի փականը բանալ, լցնել թնդանոթը, կոպիտ նշանառություն կատարել, առանց ոգտվելու նշանոցային հարմարանքներից, և ձիգ արձակել, հիշելով, որ քայքայված ու բարոյալքված հակառակորդի վրա 2–3 բացած արկը կարող է իսպառ վոչընչացնել նրան, նրա շարքերում խուճապ առաջացնել և վերջնականապես ջախջախել նրան։ Մարտիկները պետք է կարողանան կանչել հրետանական լուծքերին՝ հակառակորդից դրված հրանոթները թիկունք տեղափոխելու համար։

ԻՆՉՊԵՍ ՓՉԱՑՆԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀՐԱՆՈԹԸ

Յեթե հրանոթները թիկունք տեղափոխելու հնարավորություն չկա և հարկադրված պետք է թողնել հակառակորդին, այն ժամանակ անհրաժեշտ է փչացնել հրանոթները։

Հրանոթը փչացնելու համար հարկավոր է փականը հանել և տանել իր հետ (կամ թաղել) կամ փչացնել, թաղել նրա մասերը և նշանոցային հարմարանքները։ Յեթե ժամանակ չկա, այն ժամանակ պետք է բանալ փականը կացնով տեղահան անել մխոցի վատկիները կամ սեպի յեղրը կոտրել, կոտրել փականի կոթը, դուրս քաշել նշանոցը և քարի կամ կացնի հարվածներով կոտրել։ Փողը փչացնելու համար փողանցքի մեջ ածել ավազ կամ հող, հրանոթը լցնել և ձիգ կատարել, հեռանալով հրանոթից ծածկարանի յետեվը։

Եթե կան պայթեցման նյութեր, կարելի է հրանոթի փողի մեջ պայթեցնել տերմիտի փամփուշտ կամ ձեռքի նռնակ։ Եթե կան պիրոկսիլինի գլաններ, այն ժամանակ փողի լցամասի վրա պետք է պայթեցնել մեկ կամ մեկ ու կես կիլոգրամ գլաններ (շաշկաներ)։

ՑԱՆԿ

Ինչ պետք է իմանալ 3
Ինչի համար է հրետանին 4
Հրետանական հրանոթներ և արկեր . . 7
Շրապնելի և նռնակի գործողությունը . 9
Ֆիմիական և ծխային արկեր 12
Ինչպես է կազմակերպված հրետանին . 13
Ինչպես է հրաձգում հրետանին . . . 18
Հրետանին հարձակողական մարտում . . 20
Հրետանին պաշտպանողական մարտում . 22
Ինչով և ինչպես հս պարտավոր ոգնելու հրետանուն 25
Ինչպես փչացնել հակառակորդի հրանոթը 29

Դիտողության համար

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0227096

ԳԻՆԸ 5 Կ.

42.492

41
M2

358
4-33